ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

16-ը հունվարի 2026թ.
Ժամը 15^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԹԱՎ ՀՎ և Վ ծառայության ՀՎ և Վ պլանավորման և ապահովման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Հովհաննիսյան/ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ԹԱՎ ՀՎ և Վ ծառայության տեխնիկական միջոցների պլանավորման, ապահովման և շահագործման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Տ. Չալաբյան,
ՀՀ ՊՆ ԹԱՎ ՀՎ և Վ ծառայության ՀՎ և Վ պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Ավագյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի ավագ մասնագետ Ա. Արսենյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Արսենյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Արսենյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	« Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ
2	« ՀԱՅՔ-21» ՍՊԸ
3	« ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ
4	« ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ
5	« Հույս-Մոտոր » ՍՊԸ
6	« Յունիքիմ » ՍՊԸ
7	«ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 . «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Արսենյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ հետևյալի՝ «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ-ի,որի ներկայացրած հայտում բոլոր հավելվածները,այդ թվում գնային առաջարկը, բացակայում էին:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոգրյալների՝

1. « Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝
« Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 5-րդ և 7-րդ չափաբաժիններում ապրանքների տեխնիկական բնութագրերում՝ պահանջվող ցուցանիշները նշված են հստակ թվերով, բացակայում են ԳՕՍՏ-երով սահմանված թույլատրելի շեղումներն ու միջակայքերը: Անհրաժեշտ է ապրանքների ցուցանիշները ներկայացնել ԳՕՍՏ-երին համապատասխան՝ ներառելով ԳՕՍՏ-երով սահմանված թույլատրելի շեղումներն ու միջակայքերը: Ինչպես նաև 5-րդ և 7-րդ չափաբաժիններում պահանջվող տարողությունների ծավալը անհրաժեշտ է ներկայացնել լիտրերով:

2. « Ավտոֆան էյ Սի » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ « Ավտոֆան էյ Սի » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 5-րդ չափաբաժնում ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ԳՕՍՏ 23652-79 ստանդարտը չի գործում, այն փոխարինվել է ԳՕՍՏ 23652-2023-ով, որը ներկայացված է հրավերով:
Անհրաժեշտ է ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշել գործող ստանդարտ: Եթե կներկայացվի հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՍՏՕ և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, և/կամ պատճենը և/կամ համապատասխան քաղվածքը, որը թույլ կտա գնահատել առաջարկվող ապրանքի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

3. « Հույս-Մոտոր » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ « Հույս-Մոտոր » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հավելված 1.1-ում 7-րդ չափաբաժնում նշված է
«ԳՕՍՏ 21150-2017 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ»:
Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքների տեխնիկական բնութագրերը նշելով կամ ՍՏՕ, կամ ԳՕՍՏ, կամ արտադրող գործարանի ՏՊ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունները: Եթե կներկայացվի հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՍՏՕ և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, և/կամ պատճենը և/կամ համապատասխան քաղվածքը, որը թույլ կտա գնահատել առաջարկվող ապրանքի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

4. « Յունիքիմ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ « Յունիքիմ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 9-րդ չափաբաժնում ապրանքների տեխնիկական բնութագրերում՝ նշված է «արտադրող գործարանի ՏՀ 39252404.03-2019»: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացվող ապրանքների տեխնիկական բնութագրերը նշելով կամ ՍՏՕ, կամ ԳՕՍՏ, կամ արտադրող գործարանի ՏՊ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունները: Եթե կներկայացվի հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՍՏՕ և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, և/կամ պատճենը և/կամ համապատասխան քաղվածքը, որը թույլ կտա գնահատել առաջարկվող ապրանքի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

5. « ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝
« ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հավելված 1.1-ում 1-ից 9-ը չափաբաժիններում նշված է հրավերով նախատեսված ԳՕՍՏ-ը և «կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ » արտահայտությունը:
Անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիրը՝ հստակեցնելով բնութագրիչները՝ բացառելով համարժեքությունը:
Ինչպես նաև հրավերում 8-րդ չափաբաժնում սահմանված է «կայունությունը բարձր ջերմաստիճանում՝ ±50C» ,իսկ «ԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է – նշանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.4 21.01.2026թ.-ին հայտերի գնահատման նիստը շարունակվեց և գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում « Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ-ի, « Ավտոֆան էյ Սի » ՍՊԸ-ի և « Հույս-Մոտոր » ՍՊԸ -ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջիններիս կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան,իսկ
- « Յունիքիմ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանության շտկման հայտում 9-րդ չափաբաժնում նշված էր այլ ապրանքի անունով տեխնիկական հրահանգ, որտեղ Աղյուսակ 1-ում արտաքին տեսքի նկարագրության բաժնում Արտաքին տեսքի ցուցանիշում նշված է «Համասեռ թափանցիկ ներկված հեղուկ,առանց մեխանիկական» արտահայտությունը, ինչը կիսատ էր, բացակայում էր /խառնուրդներ/ բառը և չէր համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին, որտեղ նշված է /միասեռ թափանցիկ գունավորված հեղուկ, առանց մեխ. խառնուրդների/, ինչպես նաև «-հեղուկի զանգվածային,որը թորվում է հասնելով 150^{0}C,ոչ ավելի» բնութագրիչ արտահայտությունում բացակայում էր չափման միավոր հանդիսացող % նշանը:
- « ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանության շտկման հայտում 2-րդ չափաբաժնում բացակայում էր ԳՕՍՏ-ից հետո «առաջին տեսակի» նշումը, 3-րդ,8-րդ և 9-րդ չափաբաժիններում ներկայացված հրավերից տարբերվող ստանդարտներ էին ներկայացված, որոնց համար հրավերով պահանջվող կրկնօրինակները կամ քաղվածքները բացակայում էին: Ինչպես նաև հրավերում 8-րդ չափաբաժնում սահմանված է «կայունությունը բարձր ջերմաստիճանում՝ ±5^{0}C» , իսկ « ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է – նշանը:
Վերոգրյալով պայմանավորված 22.01.2026թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ « Յունիքիմ » ՍՊԸ-ի և « ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ի հայտերը մեժվեցին այն չափաբաժինների մասով, որոնցով սույն արձանագրության 2.4 կետով արձանագրվել են անհամապատասխանություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Արսենյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 6 մասնակիցներ:

	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության					
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	/ հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՎՕ-12	կգ	300	1 708 200	«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	1 422 000	1 706 400	«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	1 422 000	1 706 400
2	հակասառիչ հեղուկ /Էթիլցելլոզոլվ/	կգ	6 000	10 656 000	«ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ	8 300 000	9 960 000	«ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ	8 300 000	9 960 000
								«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	8 460 000	10 152 000
3	շարժիչի յուղեր /5W40/	կգ	500	994 500	Բարձր գնային առաջարկ			«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ /մերժված/	786 250	943 500
								« ՀԱՅՔ-21» ՍՊԸ	1 190 000	1 428 000
4	շարժիչի յուղեր /Մ-10ԴՄ/	կգ	10 000	12 120 000	Բարձր գնային առաջարկ			«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	11 600 000	13 920 000
								« ՀԱՅՔ-21» ՍՊԸ	12 325 000	14 790 000
5	փոխանցման տուփի յուղեր /ՏՄպ-15Կ/	կգ	10 000	14 800 000	«Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ	8 880 000	10 656 000	« Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ	8 880 000	10 656 000
								«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	12 050 000	14 460 000
								«ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ	16 100 000	19 320 000
6	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/	կգ	100	168 700	«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	136 000	163 200	«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	136 000	163 200
7	լիտոլ-24 /Լիտոլ-24/	կգ	10 000	17 670 000	«Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ	14 575 000	17 490 000	« Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ	14 575 000	17 490 000
								« Հոպս-Մոտոր » ՍՊԸ	14 657 500	17 589 000
								«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ	16 200 000	19 440 000
								«ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ	20 533 333	24 640 000
8	արգելակի հեղուկ /ԴՕՏ-4/	կգ	3 000	2 940 000	Ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պայմաններին			«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ /մերժված/	4 200 000	5 040 000
9	հակասառիչ հեղուկ /Տոսոլ Ա-40/	կգ	50 000	16 600 000	Ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պայմաններին			«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ /մերժված/	12 000 000	14 400 000
								« Յունիքիմ » ՍՊԸ /մերժված/	12 750 000	15 300 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ա. Արսենյան)

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.2 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը 22.01.2026թ.-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1. «ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ » ՍՊԸ-ին՝ 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով:
2. «Արդմոր Կոնստրակտ » ՍՊԸ -ին՝ 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:
3. «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ » ՍՊԸ -ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգը չի կայացել՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի /պայմանագիր չի կնքվում /, ինչպես նաև 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգը չի կայացել՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին/:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Արսենյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող՝ Ա. Հովհաննիսյան

Գնահատող՝ Ա. Ավագյան

Գնահատող՝ Տ. Չալաբյան

Գնումները համակարգող՝ Ա. Արսենյան